Դաս 18. Ավանդույթներ, ծեսեր, եկեղեցական տոներ (Տյառնընդառաջ, Սուրբ Զատիկ)

Տրնդեզի առասպելը

Տրնդեզը, ըստ էության, խորհրդանշում է ձմռան հրաժեշտն ու գարնանամուտը: Այս տոնի ծագումը ժողովրդական բանահյուսությամբ կապվում է կրակի աստված Վահագնի մասին պատմող առասպելի հետ: Հնում, հոգնելով ցրտաշունչ ձմռանից, հայերը խարույկներ էին վառում՝ արևին օգնելու և գարնանամուտը արագացնելու համար: Արևի աստվածային կրակից ծնված Վահագնը սպանում է ջրի աղբյուրը հսկող Վիշապին, որը մարդկանց ջուր էր տալիս մարդկային զոհերի դիմաց: Երբ ջուրը սկսում է հոսել, հողը ծաղկում է: Այդպես կրակը օգնում է հաղթել ձմռանը: